ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

14.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/03

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ա. Չիլինգարյանի (պետական գրանցման վկայական N 01Ա008993)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.04.2019թ. թիվ /26-1/6463-2019 գրությամբ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 13.03.2019թ. թիվ 173 գրության հիման վրա, 17.04.2019թ. թիվ /26-1/6463-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ին (հետայսու՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 22.04.2019թ. գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը 04.03.2019թ. մասնակցել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից հայտարարված «ՀԾ-ԳՀ-ԱԾՁԲ-2019/34/35/36/37/38» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին՝ Նոր Կյանք համայնքի խմելու ջրագծի ներքին ցանցի կառուցման (չափաբաժին 4) և Տափերական համայնքը սնուցող խմելու մայր ջրատարի կառուցման (չափաբաժին 5) աշխատանքների ձեռքբերմանը:

Ընկերության աշխատակցին հանձնարարվել է Նոր Կյանք համայքն խմելու ջրագծի ներքին ցանցի կառուցման աշխատանքի կատարման գինը գրել 25 560 000 ՀՀ դրամ, որի նախահաշվային արժեքը կազմում է 35 339 450 ՀՀ դրամ, իսկ Տափերական համայնքը սնուցող խմելու մայր ջրատարի կառուցման աշխատանքների կատարման գինը գրել 39 600 000 ՀՀ դրամ, որի նախահաշվային արժեքը կազմում էր 55 476 750 ՀՀ դրամ:

Սակայն աշխատակիցը շփոթել և Նոր Կյանք համայնքի խմելու ջրագծի ներքին ցանցի կառուցման աշխատանքի կատարման գինը գրել է 39 600 000 ՀՀ դրամ, իսկ Տափերական համայնքը սնուցող խմելու ջրատարի կառուցման աշխատանքների կատարման գինը գրել է 25 560 000 ՀՀ դրամ, որի արդյունքում Ընկերությունը զբաղեցրել է առաջին տեղը:

Ընկերությունը հայտել է, որ տեղի է ունեցել թյուրիմացություն, ցույց է տալիս այն հանգամանքը, որ Ընկերության և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցի գնի (37 000 000 ՀՀ դրամ) տարբերությունը կազմում է 12 000 000 ՀՀ դրամ, իսկ երկրորդ և հաջորդ տեղերը զբաղեցրած մասնակիցների գների տարբերությունը կազմում է ընդամենը մի քանի տասնյակ հազար դրամ:

Այն, որ թյուրիմացաբար 4-րդ և 5-րդ չափաբաժինների թվերի տեղերը խառնվել է, ապացուցում է նաև այն հանգամանքը, որ Նոր Կյանք համայնքի խմելու ջրագծի ներքին ցանցի կառուցման աշխատանքի կատարման գինը գրվել է 39 600 000 ՀՀ դրամ, այն

դեպքում, որ նրա նախահաշվային արժեքը կազմում էր 35 339 450 ՀՀ դրամ, բայց հասկանալի է, որ նախահաշվային արժեքից ավել գին գրելն անիմաստ էր:

Տափերական համայնքը սնուցող խմելու մայր ջրատարի կառուցման համար Ընկերությանն անհրաժեշտ կլինի կատարել լրացուցիչ 12 000 000 ՀՀ դրամի ներդրում, որի հնարավորությունը Ընկերությունը չունի, որովհետև Ընկերության տարեկան շրջանառությունը վերջին տարիներին կազմում է ընդամենը 25 000 000-30 000 000 ՀՀ դրամ, այդ պատճառով Ընկերությունը հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ընկերությունը հայտնել է, որ որևէ դիտավորություն չի ունեցել և երկարատև գործունեության ընթացքում առաջին դեպքն է, որ Ընկերությունը հրաժարվում է պայմանագիր կնքելուց:

«Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/03 ընթացակարգի շրջանակներում 26.04.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. **<u>Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (հետայսու՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.03.2019թ. թիվ 173 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կարիքների համար 25.02.2019թ. հրապարակվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/34/35/36/37/38» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հրավերը, որի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 06.03.2019թ.: Հայտերի բացման նիստի արդյունքում ընթացակարգի թիվ 5 չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է հայտարարվել «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն: Վերջինիս ուղարկվել է ծանուցում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով և հրավերով սահմանված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու նպատակով, ինչի համար սահմանվել է վերջնաժամկետ երեք աշխատանքային օր տևողությամբ:

Ս.թ. մարտի 12-ին Ընկերությունից ստացվել է գրություն առ այն, որ նշված Ընկերության հայտը կազմելուց տեղի է ունեցել սխալ, որի արդյունքում չափաբաժին 4-ի և 5-ի տեղերը խառնվել են: Ընկերությունը հրաժարվում է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/34/35/36/37/38» ծածկագրով գնման գործընթացի 5-րդ չափաբաժնի մասով հետագա մասնակցությունից:

«Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի ընթացքում ի հայտ են եկել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը և Ընկերության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/03 ընթացակարգի շրջանակներում 26.04.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/03 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/03 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար կազմակերպվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/34/35/36/37/38» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.03.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 11.03.2019թ. գրությամբ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն հրաժարվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/34/35/36/37/38» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հետագա մասնակցությունից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.04.2019թ. թիվ /26-1/6463-2019 գրությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 13.03.2019թ. թիվ 173 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար կազմակերպվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/34/35/36/37/38» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.03.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 11.03.2019թ. գրությամբ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն հայտնել է, որ հայտը կազմելուց տեղի է ունեցել սխալ, որի հետևանքով Ընթացակարգի 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով գնային առաջարկների տեղերը խառնվել են:

Նույն գրությամբ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովին խնդրել է Ընկերության կողմից ներկայացված հայտը համարել անվավեր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար կազմակերպված «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/34/35/36/37/38» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերը բացելուց հետո, 11.03.2019թ. գրությամբ դիմել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ խնդրելով անվավեր համարել իր կողմից ներկայացված հայտը, դրանով իսկ հրաժարվելով գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/34/35/36/37/38» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.04.2019թ. թիվ /26-1/6463-2019 գրությամբ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**